զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

7.8 Պահանջի դեպքում որևէ մասնակի հայտի, ներառյալ գնային առաջարկի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակիցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է բնօրինակ փաստաթյեթը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լրանկարել դրանք և վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

7.9 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակից հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակիցի՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.10 Եթե սույն իրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

7.11 Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստում պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ ինամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քոյր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քոյր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնարացար է հայտնում տվյալ ընթացակարգից:

7.12 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին << օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.13 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում: Հանձնաժողովի այն անդամները, որոնք հանձնաժողովի աշխատանքների մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը:

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեք պետական Եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող Եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ըստ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է [Lena.Najaryan@taxservice.am](mailto:Lena.Najaryan@taxservice.am) էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով [karine.sargsyan@taxservice.am](mailto:karine.sargsyan@taxservice.am), [gor.mkrchyan@taxservice.am](mailto:gor.mkrchyan@taxservice.am) և [procurement@minfin.am](mailto:procurement@minfin.am) էլեկտրոնային փոստի հասցեներին<sup>1</sup>.

7.14 Կոմիտեն սույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ոչ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող Եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

7.15 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող ինչպ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող ինչպ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ ըննող անձին: Ըստ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակցից կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Սույն հրավերի 7.14-րդ կետով սահմանված մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Սույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ըստ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

7.16 Սույն հրավերի 1-ին մասի 7.14 կետով նախատեսված կոմիտեից տեղեկատվության տրամադրման վերջնաժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերն հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

<sup>1</sup> Կոմիտեի կողմից գրամադրված գեղեկարգվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի գնահապելու:

**7.17** Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

**7.18** Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակառի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավատագիրը պետք է գետեղված լինի «Նոյնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

**7.19** Սույն հրավերի 1-ին մասի 7.16 կետով նախատեսված փաստաթղթը գնահատելու նպատակով հրավերի նիստում հանձնաժողովը գնահատում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության համապատասխանությունը հրավերի պահանջներին: Եթե առաջին տեղը գրադեցրած մասնակցից մասնակցության իրավունքը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից:

Եթե առաջին տեղը գրադեցրած մասնակցի մասնակցության իրավունքը գնահատվում է անբավարար, հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նոյն նիստում հանձնաժողովը առաջին տեղը գրադեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ գրադեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.18-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

**7.20** Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.19-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

**7.21** Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովը նիստին ներկա անդամները:

Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

**7.22** Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եղանակությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցում ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եղանակություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

**7.23** Սույն հրավերի 1-ին մասի 7.22 կետի կիրառման նպատակով հրավերվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

**7.24** Ընտրված մասնակցին որոշելու նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) Համակարգում նշում է ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցներին՝ նրանց դասակարգելով ըստ գնահատման արդյունքների և գնային առաջարկների.

2) Համակարգի միջոցով ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստին ուղարկում է գնահատման արդյունքների մասին հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

**7.25** Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

**7.26** Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

**8.1** Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

**8.2** Սույն հրավերի 1-ին մասի 7.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 7.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

**8.3** Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

**8.4** Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

**8.5** Եթե ընտրված մասնակցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին՝ ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա գրկում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին՝ ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթուղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

**8.6** Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

**8.7** Մինչև սույն հրավերի 1-ին մասի 8.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

**8.8** Պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգում ավարտում է ընթացակարգը:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

**9.1** Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

**9.2** Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ողջ ծավալով կատարման վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունները ողջ ծավալով կատարվելուն հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ծևով: Կանխիկ փողի ծևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին: Պայմանագրի ապահովումը միակողմանի

հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ներկայացվելու դեպքում այն ներկայացվում է հավելված N 8-ով սահմանված ձևին համապատասխան:

9.3 Պայմանագրով պատվիրատովի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի պահովում կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի պահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բնեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Կանխավճարի մարման կարգը սահմանած է պայմանագրի նախագծով:

## 10. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԶԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

10.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում իրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել Երևան քաղաքի ավագանու որոշման հիման վրա:

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագրի չի կնքվում:

10.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## 11. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

11.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատովի, հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

11.2 Գնումների, այդ թվում բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավիրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական վարչական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

11.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախրան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատովի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ գրավոր դիմում ներկայացնելով՝ աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Մելիք-Աղամյան փող. 1 հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, պատվիրատովի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

11.4 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագրի կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացնում է սույն իրավերի 1-ին մասի 7.26-րդ կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

2) գնման առարկայի բնութագրերը կամ իրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

11.5 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.

2) պատվիրատովի անվանումը և հասցեն.

3) բողոքարկող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական իիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Ընդ որում բողոքարկման վճարի չափը կազմում է 30 հազար ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՀ պետական բյուջե՝ այդ նպատակով լիազորված մարմնի անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվին:

7) այն բանի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետ փոխանցվի վճարը.

8) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

**11.6** Բողոքը, այդ թվում՝ մասնակի, բավարարվելու մասին բողոքները քննող անձի կողմից կայացված որոշումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող աշխատանքային օրը տվյալ բողոքը քննած և որոշուա կայացրած բողոքներ քննող անձը գրավոր լիազորված մարմնին է տրամադրում բողոքարկման վճարը կատարած լինելը հավաստող փաստաթղթի պատճենը և այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի հետ վերադարձվող գումարը: Լիազորված մարմինը սույն կետում նշված փաստաթղթի պատճենը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրը ընթացքում բողոքարկման վճարը հետ է փոխանցում այն վճարած անձին՝ ներկայացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

**11.7** Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հրավերի 1-ին մասի 11.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա սույն կետով սահմանված ժամկետում շտկված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

**11.8** Օրենքի 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

**11.9** Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքը ընթացակարգ հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

**11.10** Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարածգվել մեկ անգամ մինչև 10 օրացուցային օրով: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**11.11** Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հակողություն:

**11.12** Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

**11.13** Բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

**11.14** Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը գրկում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

**11.15** Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշումն կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

**11.16** Յուրաքանչյուր անձ, որը շահագրգուված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կատարած

գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

11.17 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով և սույն իրավերի 11.13-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ենելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն կետով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

## ՄԱՍ Բ ՀՐԱՀԱՆԳ

### ԳՆԱՆՇՄԱՆՀԱՐՑՄԱՆՀԱՅՏԸՆԴՊԱՏՐԱՍԵԼՈՒ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ծևերից տարբերվող՝ այլ ծևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերնից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

#### 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները՝ սույն հրավերի 1-ին մասի 7.18 կետով սահմանված կարգով:

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված

1) «**Պիտանելիության չափորոշիչ».**

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 հայտարարություն սույն հրավերի 1-ին մասի՝ 2.2 կետով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու և 4.3 կետի 6-րդ և 7-րդ ենթակետերով նախատեսված պահանջների բացակայության մասին՝ համաձայն հավելված N 2-ի, ինչպես նաև նոյն կետի 8-րդ ենթակետով նախատեսված անձանց մասին տեղեկատվություն՝ համաձայն հավելված N 2.1-ի.

2) «**Տեխնիկական չափորոշիչ».**

2.3 հայտարարություն՝ սույն հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշներին (մասնագիտական փորձառություն, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական և ֆինանսական միջոցներ) իր համապատասխանության մասին համաձայն հավելված N 3-ի.

2.4 Սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը.<sup>2</sup>

2.5 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.6 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիոնով).<sup>3</sup>

3) «**Ֆինանսական չափորոշիչ».**

2.7 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 4-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ծևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

<sup>2</sup> Եթե հրավերով լիցենզիայի պահանջ չի սահմանվում, ապա սույն կերպ հանվում է հրավերից:

<sup>3</sup> Համապետ գործունեության կարգով (կոնսորցիոնով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակիցի կողմից հասպարվող փաստաթղթերը պետք է հասպարված լինեն կոնսորցիոնի բոլոր անդամների կողմից:

**ԴԻՄՈՒՄ**  
**գնանշման հարցմանը մասնակցելու**

հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել  
մասնակցի անվանումը

Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵԶ-ԳՀԾՁԲ-18/93» ծածկագրով հայտարարված  
գնանշման հարցման \_\_\_\_\_ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի  
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

\_\_\_\_\_ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է  
մասնակցի անվանումը

\_\_\_\_\_ ռեզիդենտ:  
երկրի անվանումը

\_\_\_\_\_ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ \_\_\_\_\_ :  
մասնակցի անվանումը հարկի վճարողի հաշվառման համարը

\_\_\_\_\_ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ \_\_\_\_\_ :  
մասնակցի անվանումը էլեկտրոնային փոստի հասցեն

Մասնակցի անվանումը (դեկանարի պաշտոնը, անուն ազգանունը) \_\_\_\_\_ ստորագրությունը \_\_\_\_\_

Կ. Տ.<sup>4</sup>

<sup>4</sup> սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հասպատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հավելված 2  
«ԵՔ-ԳՀԾԶԲ-18/93» ծածկագրով  
գնանշման հարցման հրավերի

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին**

Սույնով \_\_\_\_\_-ն հայտարարում և հավաստում է, որ  
մասնակցի անվանումը

բավարարում է «ԵՔ-ԳՀԾԶԲ-18/93» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միաժամանակ \_\_\_\_\_-ն  
մասնակցի անվանումը

1) հայտնում և հավաստում է, որ «ԵՔ-ԳՀԾԶԲ-18/93» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է գնանշման հարցման հրավերով սահմանված \_\_\_\_\_-ին  
մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) \_\_\_\_\_-ին  
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս \_\_\_\_\_-ին  
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայտաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

2) կից ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)\*:

մասնակցի անվանումը (դեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրություն

Կ. Տ.<sup>5</sup>

<sup>5</sup> Սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հասպարզում է էլեկտրոնային թվային սպորագրությամբ:

\* Սույն ենթակեդում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի դեկավարի դրվագները:

ՏՎՅԱԼՆԵՐ  
մասնակցի իրական շահառուների մասին

h/h	Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

— ն հավաստում է, որ իրական շահառուների մասին  
մասնակցի անվանումը

ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

մասնակցի անվանումը (դեկավարի պաշտոնը, անոն ազգանունը)

ստորագրություն

Կ. Տ.<sup>6</sup>

<sup>6</sup> սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հասպատվում է էլեկտրոնային թվային սպորագրությամբ:

Հավելված 3  
«ԵՔ-ԳՀԾՁԲ-18/93» ծածկագրով  
գնանշման հարցման հրավերի

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին

Սույնով \_\_\_\_\_ -ն հայտարարում և հավաստում է, որ  
մասնակցի անվանումը

բավարարում է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/93» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

---

մասնակցի անվանումը (դեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.<sup>7</sup>

---

<sup>7</sup> Սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հասպարզում է էլեկտրոնային թվային սպոռագրությամբ:  
\* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը գեղեկագրում հրապարակելը:

Հավելված 4  
«ԵՔ-ԳՀԾՁԲ-18/93» ծածկագրով  
գնանշման հարցման հրավերի

**ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ**

Ուսումնասիրելով «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/93» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, \_\_\_\_\_ -ն առաջարկում է  
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Զափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Արխիվացման ծառայություններ			

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անոն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. 8

<sup>8</sup> սոյն հավելվածը չի կնքվում, եթե այն հասկարգվում է էլեկտրոնային թվային սպորտագրությամբ:

\* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը դեղեկագրում հրապարակելը:

\*\*Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա դրվագը պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

ԱՐԽԻՎԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N \_\_\_\_\_

թ. \_\_\_\_\_

«\_\_\_\_ » \_\_\_\_ 20 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և -----ն, ի դեմս տնօրեն -----ի, որը գործում է -----կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արխիվացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայություն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏՈՎՈՐ Է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավող հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 ԿԱՏԱՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏՈՎՈՐ Է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լրության կամ սնանկացման գործնթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆԱՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

